# Արձանագրություն N 03

«ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-63/25» ծածկագրով ԳՀ գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Գյումրի

06 հոկտեմբերի, 2025թ, ժ 15:00,
«Գյումրու համայանքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ, Շիրակի մարզ,
ք. Գյումրի, Վարդանանց հր. 1

Հանձնաժողովի նախագահ՝

1) Ավետիս Առաքելյան – Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

3) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ

4) Վարդան Զարիֆյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ,

5) Հրաչիկ Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ,

1. «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-63/25» ծածկագրով ԳՀ առաջարկների բացման վայրի, գնային առաջարկների ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /մրցույթի արդյունքների ամփոփման/ մասին

---

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնային առաջարկ ներկայացնելու մասին 23.09.2025թ. էլեկտրոնային եղանակով տեղադրվել է www.gnumner.am հասցեում:

1.2 «Գյումրու համայանքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կարիքների համար համակարգչային սարքավորումների ձեռքբերման համար «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-63/25» ծածկագրով ԳՀ-ի համաձայն գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N | Անվանումը |
|---|---|
| 1. | «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ |
| 2. | «Մեգա Սթոր» ՍՊԸ |
| 3. | «Մոնիկ» ՍՊԸ |
| 4. | «Պատրոն ՌՄ» ՍՊԸ |
| 5. | «Է. Ս. Ա. Ա.» |
| 6. | «ԱՆՏԻԳԱ» ՍՊԸ |

*1.4 Տվյալներ հայտերի ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին*

- Գնային առաջարկ ներկայացրած մասնակցի կողմից ներկայացրած հայտում առկա է հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0*

*1.5 Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.*

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը ներկայացրել է գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, գնի առաջարկ և հրավերով պահանջվող փաստաթղթերը: Փաթեթում ներկայացված փաստաթղթերը հաստատված են:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0*

*1.6. Մասնակիցների առաջարկած գները՝*

ՀՀ դրամ

| N/N | Ապրանքի անվանումը | «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ | | «Մեգա Սթոր» ՍՊԸ | | «Մոնիկ» ՍՊԸ | | «Պատրոն ՌՄ» ՍՊԸ | | «Է Ս Ա Ա» | | «ԱՆՏԻԳԱ» ՍՊԸ | | Գնման հայտով նախատեսած գին |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | |
| 1. | **Համակարգիչ** | | | 3 562 500 | 4 275 000 | 3 802 500 | 4 563 000 | | | | | | | **4 650 000** |
| 2. | **Սկաներ** | 300 000 | **360 000** | 437 500 | 525 000 | 425 625 | 510 750 | 435 000 | 522 000 | 447 000 | 447 000 | 300 000 | 360 000 | **540 000** |

Հանձնաժողովը արձանագրեց՝

- «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՊՁԲ-63/25» ծածկագրով գնանշման հարցման միջոցով հայտարարված գնման շրջանակում՝
- 1-ին չափաբաժնի մասով նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել «Մեգա Սթոր» ՍՊԸ-ն:
- 2-րդ չափաբաժնի մասով «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ և «ԱՆՏԻԳԱ» ՍՊԸ-ները ներկայացրել են հավասար գնային առաջարկ: **«ԱՆՏԻԳԱ» ՍՊԸ-ի հայտում բացակայում է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված 1.1-ը:**
- 1-ին չափաբաժնի մասով հրավերի պահանջների համաձայն՝ հրավերով նախատեսված առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելիս տրամադրվում է նաև **սպասարկման կենտրոնի տվյալները և արտադրողի կողմից երաշխիքային նամակ /MAF**: «Մեգա Սթոր» ՍՊԸ-ի գնման հայտում բացակայում էր նշված փաստաթուղթը:
- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-ն որոշման 41-րդ կետի համաձայն անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:
- «Մեգա Սթոր» ՍՊԸ-ից պահանջվում է ներկայացնել **սպասարկման կենտրոնի տվյալները և արտադրողի կողմից երաշխիքային նամակ /MAF,** իսկ «ԱՆՏԻԳԱ» ՍՊԸ-ից՝ **առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված 1.1-ը:**
- «Մեգա Սթոր» ՍՊԸ-ն ներկայացրեց փաստաթուղթ, սակայն ներկայացված ՄԱՖ փաստաթուղթը չի համապատասխանում հրավերի պահանջներին հետևյալ պատճառներով՝
- Փաստաթղթում բացակայում են Վենդորի (արտադրողի) կնիքն ու ստորագրությունը, ինչը վերացնում է դրա իրավաբանական ուժը:
- Բացակայում է վստահելիության երաշխիք տվյալ բրենդի նկատմամբ:
- Չկա որևէ հաստատում կամ տեղեկատվություն այն մասին, որ նշված բրենդը հանդիսանում է պաշտոնական դիստրիբյուտոր ՀՀ տարածքում:
- Նշված սերվիս կենտրոնների վերաբերյալ որևէ տեղեկատվություն առկա չէ նաև բրենդի պաշտոնական կայքում, ինչը հարցականի տակ է դնում այդ տեղեկատվության իսկությունը:
- Տեխնիկական բնութագրերի (ՏՋ) համաձայն՝ պահանջվում է առնվազն 3 տարվա երաշխիքային սպասարկում, մինչդեռ Ձեր կողմից ներկայացված փաստաթղթում նշված է միայն 1 տարվա երաշխիք, ինչը ակնհայտ անհամապատասխանություն է:
- «ԱՆՏԻԳԱ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթուղթը համապատասխանում է հրավերի պահանջներին:

Հանձնաժողովը որոշեց՝

- 1-ին չափաբաժնի մասով «Մեգա Սթոր» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:
- 1-ին չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչել հաջորդող տեղ զբաղեցրած մասնակից՝ «Մոնիկ» ՍՊԸ-ին:
- **2-րդ չափաբաժնի մասով «Ալֆա-Էտալոն» և «ԱՆՏԻԳԱ» ՍՊԸ-ները** ներկայացրել են հավասար գնային առաջարկ: Հրավերի պահանջների համաձայն՝ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը հավասար գներ ներկայացրած մասնակիցներին համակարգի միջոցով՝ ոչ ավտոմատ ծանուցման եղանակով, միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման պայմանների, տևողության, օրվա, ժամի և վայրի մասին:
- Բանակցության նիստը հրավիրել 2025 թվականի հոկտեմբերի 08-ին ժամը 15:00-ին, Գյումրու համայնքապետարանի վարչական շենքի 3-րդ հարկում, 65-րդ աշխատասենյակ, 15 րոպե տևողությամբ:
- Բանակցության արդյունքները գնային առաջարկի հավելվածի տեսքով՝ հաստատված էլեկտրոնային ստորագրությամբ մասնակիցները կարող են ուղարկել հրավերում նշված էլ. հասցեին՝ մինչև բանակցության վերջնաժամկետի լրանալը, այլապես փաստաթուղթը չի ընդունվի:
- 1-ին չափաբաժնի մասով Գնումների մասին ՀՀ օրենիք 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետը 10 օրացուցային օր է:
- Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին ծանուցել Պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումը՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Ավետիս Առաքելյան (ԳՊ/ԳԱՊ)

Անդամներ՝ ---------- Դմիտրի Մանվելյան (ԳՊ/ԳԱ)

---------- Դավիթ Հարությունյան (ԳՊ/ԳԱ)

---------- Վարդան Զարիֆյան (ԳՊ/ԲԱ)

---------- Հրաչիկ Վարդանյան (ԳՊ/ԲԱ)

Քարտուղար՝ ---------- Արմինե Սարգսյան (ԳՊ/ՄՀմ)